ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, ՆԻԿՈԼԱՅ Բ., ԻՆՔՆԱԿԱԼ ամենայն Ռուսաց, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիոյ և այլն և այլն, յայտնում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, որ մայրաքաղաքում և Մեր Կայսրութեան շատ վայրերում տեղի ունեցող խռովութիւններն ու յուզմունքները մեծ, ծանր վշտով համակում են Մեր սիրտը։ Ռուսաց Պետութեան բարիքը անբաժանելի է ժողովրդեան բարիքից և ժողովրդեան տրտմութիւնը նորա տրտմութիւնն է։ Այժմեան յուզմունքը կարող է խստացընել ժողովրդի տրամադրութիւնը և վտանգ սպառնալ Մեր Տէրութեան ամբողջութեանն ու միութեանը։ Արքայական սպասաւորութեան մեծ ուխտը հրամայում է Մեզ ձգտել բոլոր ուժով, որքան կարելի է շուտ, վերջ դնելու Պետութեան համար այսչափ վտանգաւոր խռովութեան։

Հրամայելով պատշաճաւոր իշխանութեանց միջոցներ ձեռք առնել վերացնելու անկարգութեան, խռովութեան և բռնութեան անմիջական արտայայտութիւնները՝ պաշտպանելու համար խաղաղ մարդկանց, որոնք ձգտում են հանգիստ կատարելու իրենց վերայ եղած պարտքը, Մենք Պետական կեանքը խաղաղացնելու համար Մեր նախասահմանած ընդհանուր միջոցները գործադրելու նպատակով անհրաժեշտ համարեցինք միացնել Բարձրագոյն Կառավարութեան գործունէութիւնը։ Կառավարութեան վերայ պարտք ենք դնում ի կատար ածել մեր անյողդողդ կամքը. Ա. Ճնշելով ազգաբնակութեանը քաղաքացիական ազատութեան անսասան հիմունքներ՝ անձի իսկական անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի, ժողովների և ընկերակցութիւնների ազատութեան սկզբունքներով. Բ. Զգաստարեցնելով Պետական Դումայի համար նշանակուած ընտրութիւնները՝ այժմ իսկ հրաւիրել Դումային մասնակ-

ցելու ըստ չափու հնարաւորութեան, Դումայի գումարման համար մնացած կարճ ժամանակին համեմատ, ազգաբնակութեան այն դասակարգերը, որոնք բոլորովին զրկուած են ընտրական իրաւունքից, թողնելով որ նոր հատատուած օրէնսդրական կարգը զարգացնէ ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքը. Գ. Սահմանել որպէս անխախտ կանոն, որ ոչ մի օրէնք զօրութիւն չունենայ առանց Պետական Դումայի հաւանութեան և որ ժողովրդի ընտրեալները ապահով հնարաւորութիւն ունենան իրապէս մասնակցելու Մեր կարգած իշխանութեանց գործառնութիւնների օրինաւորութեան հսկողութեանը.

Հրաւիրում՝ ենք Ռուսաստանի բոլոր հաւատարիմ զաւակներին միտ բերել իրենց պարտքը հայրենիքի վերաբերութեամբ, օգնել վախճան դնելու այս չլսուած խռովութեանը և Մեզ հետ միասին բոլոր ոյժերը լարել հայրենի երկրում՝ անդորրութիւն ու խաղաղութիւն վերականգնելու համար.

Տուած է Պետերհոֆում, հոկտեմբեր 17,
1905 թ. յ. Ծ. Ռ. և Մեր Թագաւորութեան
մետասաներորդ տարում.

Բնագիրը ստորագրուած է ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ՄԵԾՈՒԹԵԱՆ իսկական ձեռամբ

„ՆԻԿՈԼԱՅ“.